

Հիւպատոսին մեկնումին առիթով, Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արքեպս. Գերշ. Տ. Կիրեղ Եպս. եւ Գ. Հինդլեան ողջերբ մաղթելու գացին Հիւպատոսարան:

Շր. 13 Յունիս.- Լատինաց Ս. Անտոն փատուացւոյ տօնին առթիւ, Կէսօրէ առաջ, Ֆրանչիսկեաններու Մայր Տաճարին մէջ, Պապական նուիրակի կողմէ մատուցուած հանդիսաւոր Ս. Պատարագին ներկայ գտնուեցան Ս. Յարութեան Տաճարի Տեսուչ Գերշ. Տ. Վաղարշ Եպս. Խաչատուրեան եւ Հոգ. Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Եշ. 18 Յունիս.- Կէսօրին, Իսրայէլ այցելող նախկին Սովետ Միութեան վերջին նախագահ Միխայէլ Կորպաչեւ այցելեց Ս. Յարութեան Տաճար, որու մուտքին դիմաւորուեցաւ երեք յարանուանութեանց ներկայացուցիչներու կողմէ: Մեր կողմէ ներկայ էին Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գաբրիէան եւ Տաճարի Տեսուչ Գերշ. Տ. Վաղարշ Եպս. Խաչատուրեան:

Բշ. 22 Յունիս.- Կէսօրէ ետք, Անգլիոյ Էլիզապէթ Բ. Թագուհւոյ ծննդեան 67րդ տարեդարձին առիթով, քրիտանական Ընդհ. Հիւպատոսարանի մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, հետն ունենալով Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արքեպս., Աւագ Թարգման Հոգ. Տ. Ռազմիկ Վրդ., եւ Գ. Հինդլեան:

Դշ. 24 Յունիս.- Կէսօրէ ետք, Հոգշ. Տ. Անուշաւան Ծ. Վրդ. եւ Աւագ Թարգման Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. ներկայ եղան Եւրոպացւոյ Ս. Յովհաննէս Մկրտչի տօնին առիթով, Բեթղեհէմի St. John the Templar եկեղեցւոյ մէջ, Լատինաց Պատր. Փոխանորդ Մօնս. Քամալ Պաթիշի կողմէ մատուցուած հանդիսաւոր Ս. Պատարագին եւ յաջորդող ընդունելութեան:

ՇՆՈՐՀԱԻՈՐԱԿԱՆՔ

Պատրիարք Սրբազան Հայրը Զատկուայ Տօնին առիթով իր բարեմաղթութեանց եւ շնորհաւորանքի գիրերը յղեց Հոգեւոր եւ Կառավարական պետերուն, որոնց շնորհաւորագիրերը ընդունած է.-

- Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ, Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Առաջին Սրբազնագոյն Կաթողիկոսին:

- Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետ, Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսին:

- Թուրքիոյ Հայոց Ամեն. Տ. Գարեգին Պատրիարք Գազանճեանին:

- Հռովմէական Կաթողիկ Եկեղեցւոյ Սրբազան Բահանայապետին՝ Նորին Սրբութիւն Յովհաննէս Պօղոս Բ. Պապին:

- Մոսկուայի եւ Ռուսիոյ Օրթոտոքս Եկեղեցւոյ Ամեն. Տ. Տ. Ալէքսէյ Բ. Սրբազան Պատրիարքին:

- Թեմակալ Առաջնորդներուն, Պետական եւ Ազգային Հաստատութեանց ղեկավարներուն: